Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 602-Ա
որոշման

«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	**Ծրագրի նպատակը**	Նպաստել Արմավիրի մարզի Ակնաշենի, Ապագայի, Արտիմետի, Գայի, Գրիբոյեդովի, Մրգաստանի, Լուսագյուղի, Այգեշատի և Խորոնքի միջնակարգ դպրոցների առավել բարենպաստ ուսումնական միջավայրի ձևավորմանը՝ անհատույց տրամադրելով անհրաժեշտ գույք՝ սեղաններ, աթոռներ, գրատախտակներ և գրապահարաններ:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Ճապոնիայի կառավարություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0037, Բաբայան փողոց 23/4):
4.	**Ծրագիրը կատարողը**	«Լիդինգ Զեյնջ» գիտակրթական երիտասարդական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մաշտոցի 14/82, ՀՎՀՀ՝ 04452484):
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն, Ապագա, Արտիմետ, Գայ, Գրիբոյեդով, Մրգաստան, Լուսագյուղ, Այգեշատ և Խորոնք բնակավայրեր, բնագավառը՝ կրթական:
6.	**Ծրագրի բյուջեն**	30,416,024,96 դրամ:
7.	**Բարեգործություն ստացողը**	1) «Ակնաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակեր-պություն, ՀՎՀՀ՝ 04707429.

		2) «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 04707565. 3) «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ ՝ 04708328. 4) «Գայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 04707506, 5) «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,ՀՎՀՀ՝ 04707573. 6) «Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 04707994. 7) «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 04707693. 8) «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 04708232. 9) «Խորոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 04708019:
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2026 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի հունվարի 31-ը:
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	1) Արմավիրի մարզի Ակնաշեն, Ապագա, Արտիմետ, Գայ, Գրիբոյեդով, Մրգաստան, Լուսագյուղ, Այգեշատ և Խորոնք բնակավայրերի միջնակարգ դպրոցներին գույքի՝ սեղանների, աթոռների, գրատախտակների և գրապահարանների ձեռքբերում և անհատույց տրամադրում 29,816,024,96 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում. 2) ծրագրի աուդիտի իրականացում՝ 600,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում:

10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	1) դպրոցների գույքի՝ սեղանների, աթոռների, գրատախտակների և գրապահարանների ձեռքբերում՝ 29,816,024,96 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ